# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2022 թվականի հունիսի 29-ից հուլիսի 2-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ք. Նյու Յորք) կատարած գործուղման արդյունքների մասին**

1. **Անունը, ազգանունը՝**

   Քրիստինե Ղալեչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ ք.Նյու Յորք, 2022թ. հունիսի 29-ից հուլիսի 2-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Միավորված Ազգերի Կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի (ԳԱ) ճանապարհային անվտանգության բարելավմանը նվիրված բարձր մակարդակի հանդիպմանը մասնակցություն

6. **Քննարկված թեմաները.**

Բարձր մակարդակի հանդիպման շրջանակներում քննարկվել են հետևյալ հարցերը.

- Ճանապարհային անվտանգության կայուն զարգացման ապահովման համար քաղաքական կամքի դրսևորման անհրաժեշտությունը և կառավարության համակողմանի մոտեցումը.
- Գլոբալ ծրագրի իրականացմանը և ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով զոհերի և ծանր վնասվածք ստացողների թվի առնվազն 50%-ով նվազեցմանը հասնելու համար բոլոր շահագրգիռ կողմերի մոբիլիզացումը.
- Ճանապարհային անվտանգության ապահովման համար՝ կայուն ներքին ներդրումների, ինչպես նաև կարողությունների զարգացման և աջակցության նպատակով միջազգային ֆինանսավորման ապահովումը:

## 7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՄԱԿ-ի ԳԱ ճանապարհային անվտանգության բարելավմանը նվիրված բարձր մակարդակի հանդիպմանը հանդես եմ եկել ելույթով, որի ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի ճանապարհային անվտանգության ոլորտում առկա մարտահրավերները, որոնք վերաբերում են և՛ ենթակառուցվածքի բարելավմանը, և՛ ճանապարհատրանսպորտային պատահարների տվյալների կառավարման համակարգին, և՛ հետվթարային խնամքի համակարգին:

Մասնավորապես ելույթի ընթացքում ներկայացվել են Հայաստանի ճանապարհային անվտանգության ոլորտում առկա հետևյալ հիմնախնդիրները.

- Յուրաքանչյուր տարի ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով մահացածների թվի աճ՝ շուրջ 300 մարդ: Չնայած բազմաթիվ ջանքերին և ձեռքբերումներին, ներառյալ արագաչափերի կիրառումը, պարտադիր ապահովագրությունը, ճանապարհաշինության կանոնակարգային փոփոխությունները, ճանապարհների գծանշման և անվտանգության տարրերի տեղադրումը Հայաստանը դեռևս երկար ճանապարհ պետք է անցնի, որպեսզի կրճատվի ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով զոհերի թվի կրճատմանը:
- Հայաստանում «Անվտանգ համակարգի» ներդնման և կատարելագործման կամքի դրսևորում՝ ապահովելով ՄԱԿ-ի Ճանապարհային անվտանգության համաշխարհային ծրագրի հինգ հենասյուների՝ անվտանգ տրանսպորտային միջոցների, ենթակառուցվածքի, ճանապարհներից օգտվողների և հետվթարային խնամքի համակարգի փոխկապակցված համակարգ ներդնումը:
- Հայաստանում ճանապարհային անվտանգության բարելավման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների բազմաթիվ բացերի առկայությունը, որոնք ազդում են ՄԱԿ-ի Ճանապարհային անվտանգության համաշխարհային ծրագրի հինգ հենասյուների փոխկապակցված իրականացման վրա: Պետական մարմինները, որոնք պատասխանատու են պետական և համայնքային ճանապարհների անվտանգության ապահովման նպատակների իրականացման համար, ներառյալ՝ տրանսպորտը և ենթակառուցվածքները, շրջակա միջավայրը, կրթությունը, ոստիկանությունը, հանրային առողջությունը, արդարադատությունը և զբոսաշրջությունը, պետք է սերտորեն համագործակցեն բոլոր մակարդակներում: Միաժամանակ, արդյունավետ իրականացումը պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերի (ներառյալ ապահովագրական ընկերությունների),

օգտվողների/վարորդների ասոցիացիաների, ՀԿ-ների, դպրոցների, հետազոտողների և ակտիվ ու բովանդակալից մասնակցությունը :

- Ճանապարհային անվտանգության բոլոր հենասյուներում վթարների տվյալների կառավարման համակարգի, օրենսդրական, պլանավորման ու կառավարման բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը:

Ելույթի ընթացքում նշվել է նաև, որ հիշյալ մարտահրավերներին դիմակայելու համար Հայաստանը նախաձեռնել է բազմաթիվ բարեփոխումներ, որոնք նախատեսում են ճանապարհային անվտանգության ուժեղ կառավարման համակարգի և ժամանակակից ինստիտուցիոնալ շրջանակի ներդրումը, որը կմիավորի և կհամակարգի ճանապարհային անվտանգության հինգ հիմնասյուների գործունեությունը և, հուսով ենք, կհանգեցնի հանրային կապերի շրջանակի ձևավորմանը և ճանապարհային անվտանգության բարելավմանը:

Մասնավորապես՝ նշվեց, որ ճանապարհային անվտանգության ոլորտում թիրախները վերաբերվելու են.

- Ճանապարհային անվտանգության կառավարման նոր համակարգի ստեղծմանը՝ արդյունավետ գործիքներով և կանոնակարգերով:
- Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ տրանսպորտային միջոցների անվտանգության սարքերի տեղակայման և օգտագործման խրախուսմանը,
- Վթարից հետո արտակարգ իրավիճակների արագ արձագանքմանը.
- ճանապարհային ցանցերի բնական անվտանգության և որակի բարձրացում, հատկապես ճանապարհից խոցելի օգտվողների խմբի համար.
- Ճանապարհային երթևեկության մասնակիցների վարքագծի և գիտելիքների բարելավման համապարփակ ծրագրերի մշակմանը:

Ելույթի ընթացքում նաև երախտագիտություն հայտնվեց ՄԱԿ-ի ճանապարհային անվտանգության հիմնադրամին՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի ցածր և միջին եկամուտ ունեցող պետություններին ճանապարհային անվտանգության ծրագրերի շրջանակներում Հայաստանին աջակցելու համար, որը իրականացվում է UNDP-ի «Հայաստանում ճանապարհային անվտանգության վերափոխում: Հայաստանում ճանապարհային անվտանգության տվյալների, մարդկանց և քաղաքականության միացում» ծրագրի շրջանակներում: Նշված ծրագիրը իրականացվելու է 2021-2023 թվականներին, որի հիմնական շահառուներն են՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը: Նշենք, որ

Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Հայաստանին՝ երկրում ճանապարհային երթևեկության անվտանգության քաղաքականության իրականացմանը՝ ստեղծելով նոր ինտեգրված տվյալների բազա և ձեռք բերել քաղաքականության մշակման պրակտիկա (մասնավորապես՝ վարքագծային փորձառություն) և դյուրացնել համակարգումը:

Ծրագրի շրջանակներում՝ վարքագծով պայմանավորված ևս մեկ գենդերային համապատասխան միջամտություն կիրականացվի UNICEF-ի հետ միասին՝ օգտագործելով ճանապարհային անվտանգության վերաբերյալ ընտանիքներին վերապատրաստելու ոլորտում նրա մեծ գիտելիքներն ու փորձը՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխաների անվտանգության ապահովմանը: Միջամտությունը նպատակաուղղված կլինի դժբախտ պատահարների բարձր ցուցանիշներ ունեցող տարածաշրջանին և կիրականացվի UNICEF-ի կողմից՝ օգնելու նվազեցնել ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով երեխաների մահերն ու վնասվածքները: Թիրախային խմբերում կլինեն վարորդները և հետիոտները, ինչպես նաև տարբեր տարիքային խմբերի, այդ թվում նաև՝ մանկապարտեզային տարիքի երեխաները:

## 8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակի համաժողովի ընթացքում ընդունվելու է համառոտ և գործողությունների վրա հիմնված քաղաքական հռչակագիր, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Միաժամանակ, նախնական պայմանաորվածություն է ձեռք բերվել Իսպանիայի, Կատարի, Մոլդովայի և Մալդիվների Հանրապետությունների պաշտոնատար անձանց հետ ճանապարահային անվտանգության ոլորտում հետագա համագործակցության համար:

## 9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ելույթի ընթացքում նշված թիրախներին հասնելու ենք «Հայաստանի ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարություն» փաստաթղթի և դրա

գործողությունների ծրագրի նախագծով նախատեսված ճանապարհային անվտանգության հիմնախնդիրներին լուծում տալու ճանապարհով:

Մասնավորապես՝ ռազմավարության շրջանակներում նախատեսվում է՝

- Օրենսդրական բարեփոխումների իրականացում.
- Ճանապարհային անվտանգության միջոցառումների/ծրագրերի իրականացում և ֆինանսավորում.
- Ինստիտուցիոնալ շրջանակի սահմանում և կարողությունների զարգացում.
- Գործուն և անխափան ճանապարհային անվտանգության տվյալների համակարգի ներդրում.
- Հանրության իրազեկվածության բարձրացում, կրթական ծրագրերի իրականացում և համակարգի կատարելագործում:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը:**

06.07.2022